ԲԱՂԶԱԼԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ՝ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԴԱԳՈՅՆ ԹՆՋՈՒԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ասում են՝ պատմութիւնը պարոյրաձեւ զարգանալու յատկութիւն ունի։ Եւ որպէսզի ձախողումը չկրկնուի՝ անցեալից դասեր պէտք է քաղենք։ Պատմագիտութեան դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսեանի մենագրութեան առաջին պրակը[1] կարդալիս երբեմն սահմռկում ես իրադրութիւնների՝ հայելային ճշգրտութեամբ, նմանութիւնից, եւ համակւում ես վճռականութեամբ՝ այս պատմութիւնը չպէտք է կրկնուի։ Եւ, կարծում ենք, բնաւ պատահական չէ, որ հեղինակը բնաբան է դարձրել Սիմոն Վրացեանի խօսքերը, որոնք ուղենիշ կարող են դառնալ մերօրեայ ալեկոծ իրավիճակներում. «իմաստութիւնը ոչ յուսալքման, ոչ էլ աջ ու ձախ ամբաստանելու մէջ է։ Ընկերային կեանքի փոթորկայոյզ վայրկեաններին մեծագոյն առաքինութիւնը մտքի եւ գործի հաւասարակշռութիւնը պահպանելն է։ Ո՛չ լալ պէտք է, ո՛չ զայրանալ, այլ՝ հասկանալ։ Հասկանալուց յետոյ միայն կարելի է ուղղել անցեալի սխալները եւ գծել ապագայ կեանքի ճշմարիտ ճանապարհը։ Հասկանալ, իսկ հասկանալու համար անհրաժեշտ է տեղեակ լինել իսկական փաստերին եւ ազատ մնալ խուժանավարական յոխորտանքներից եւ թեթեւ, չհիմնաւորուած եզրակացութիւններից»։

Ներկայացուող շատ կարեւոր մենագրութիւնն օժտուած է անձնանունների եւ տեղանունների ցանկով։ Հայոց անկախ պետականութեան վերականգնման առաջին երկու տարին՝ 1918–1920 թթ., թւում է՝ մանրակրկիտ դիտարկել է պատմաբանների մի քանի սերունդ՝ բուն հայրենիքում եւ Սփիւռքում։ Թւում է՝ ժամերի ճշտութեամբ յստակեցուել են երկրի կենսագործունէութեան բոլոր ոլորտների նկարագիր-դրուագները, ամբողջացուել է համապատկեր-խճանկարը։ Սակայն։ Որքան էլ զար-

[1] Գ. Պետրոսեան, *Հայաստանի Հանրապետութեան միջազգային դրութիւնը եւ արտաքին քաղաքականութիւնը. 1918–1920 թթ.», Երեւան, 2023, 483 էջ. յղումները շարադրանքում՝ փակագծով։*

մանալի է, ցայսօր չկար ամբողջական ուսումնասիրութիւն, որը նուիրուած լիներ ՀՀ միջազգային դրութեանը, արտաքին քաղաքականութեանը, դիւանագիտական բանակցային գործընթացների լուսաբանմանը։ Աւելորդ է շեշտելը, որ հիմնախնդիրն ամբողջական ու համընդգրկուն ներկայացնելն ունի արդիական մեծ հնչեղութիւն եւ հեղինակը մեծ յաջողութեամբ է լուծել իր առջեւ դրուած խնդիրը։

Ուսումնասիրութիւնն ընդգրկում է 1918 թ. յունիս-նոյեմբեր ժամանակահատուածը։ Համակողմանի քննութեան են առնուել Առաջին աշխարհամարտի տարիներին տարածաշրջանային զարգացումները, անմիջական հարեւանների հետ սուր, անլուծելի թուացող հակասութիւնները։ Նիւթի դիտարկումն սկսւում է Ռուսաստանում 1917-ի փետրուարեան յեղափոխութիւնից մինչեւ հոկտեմբերեան յեղաշրջում։

1917-ի սեպտեմբերի 29-ից մինչեւ հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում գումարուած արեւելահայերի համախորհրդակցութիւնը (համագումար), ի թիւս այլ հարցերի, քննարկել է նաեւ «ազգամիջեան եւ ինքնորոշման հարցեր» եւ ընդունել բանաձեւ, համաձայն որի՝ ազգերի ինքնորոշման իրաւունքը հայ ժողովուրդը պէտք է ձգտի իրականացնել պետականութեան հիմունքներով եւ սկզբունքներով։ Այս համապատկերում առաջնային էր դառնում երկրամասի նոր սահմանազատման խնդիրը (Նշ. աշխ., էջ 30)։ Մի հիմնահարց, որ այսօր եւս յառնել է մեր պետութեան առջեւ, եւ ջանքեր են պէտք, որ զարգացումներն անսխալ հունով ընթանան եւ իսպառ բացառուեն տարածքային կորուստները։

1918-ի մայիսին՝ երեք պետութեան ձեւաւորման ընթացքում բնականաբար հէնց սահմանազատումը վերածուեց լուրջ փորձաքարի։ Ադրբեջանը եւ յատկապէս Վրաստանը ձգտում էին Թուրքիայի հետ յարաբերութիւնները կարգաւորել բացառապէս Հայաստանի տարածքների, Հայաստանի ինքնիշխանութեան հաշուին։ Տրապիզոնում Թուրքերը մի կողմից բանակցում էին, միւս կողմից շարունակում էին զէնքով պարտադրել եւ ամրագրել իրենց անհիմն, աւելի ճիշտ անօրինական պահանջները։ Սա թուրքական՝ դարերով յղկուած ձեռագիր է, որն անշեղօրէն կիրառում են նաեւ այսօր։

10 000 քառակուսի կիլոմետր. սա էր այն տարածքը, որ Թուրքիան՝ պատերազմում ջախջախիչ պարտութիւն կրած կողմի բաղկացուցիչ երկիրը, պատրաստ էր ճանաչել իբրեւ անկախ, ինքնիշխան Հայաստանի Հանրապետութիւն։ «Թուրքիայի ակնյայտ նպատակն էր՝ Անդրկովկասն

անկախ հռչակելով՝ այն վերջնականապէս, փաստացի եւ իրաւականօրէն կտրել Ռուսաստանից եւ թոյլ, անօգնական այդ երկրամասը զաւթելով՝ այն ներառել իր ազդեցութեան ոլորտը եւ ապահովել իր անվտանգութիւնը Ռուսաստանից» (Անդ, էջ 64)։ Ընդ սմին, թուրքերը յատկապէս հայերին էին համարում անթաքոյց ռուսամէտ, քրիստոնեայ այդ երկրին անմնացորդ նուիրուած, մինչդեռ, վրացիներն ու կովկասեան թաթարները հակառակ փաղանգում էին։ Թուրքերը ջանում էին պատերազմից եւ յեղափոխութիւններից հիւծուած կայսրութիւնը վերջնականապէս-ընդմիշտ-առյաւէտ հեռացնել տարածաշրջանից։

Հայկական պատուիրակութիւնները թէ՛ Տրապիզոնում, թէ՛ Կ. Պոլսում, թէ՛ Բաթումում, թէ՛ Բեռլինում (յատկապէս առաջին երկուսում) ենթարկւում էին հոգեբանական անասելի ճնշումների, եւ այդ ամենը չէր կարող չազդել արդիւնքների վրայ։ Անհամաձայնութեան դէպքում սկսւում էր ուղիղ սպառնալիքը՝ ռուսահայերը չեն համաձայնում, ուրեմն կարող են ենթարկուել կոտորածի, ինչպէս տաճկահայերը։ Թուրքերը չէին ժխտում, չէին թաքցնում, որ աններելի, մարդկութեան դէմ չտեսնուած յանցագործութիւն, ոճիր, ցեղասպանութիւն է իրագործուել, որը... կարող էր շարունակուել Արեւելեան Հայաստանում։ Նրանք յայտարարում էին. «Թուրքիայի համար բացարձակապէս ընդունելի չէ, եւ նոյնիսկ աւելորդ է Թուրքահայաստանի մասին խօսելը, այնտեղ (Արեւմտեան Հայաստանում.— Գ. Պ.) հայեր չկան եւ չեն լինի, քանզի որտեղով անցնում է թուրք զինուորը, այնտեղ այլեւս հայ չի մնայ» (անդ, էջ 70)։ Եւ իբրեւ շարունակութիւն, նրանք Անդրկովկասի խաղաղարար պատուիրակութեան վրայ, թաթար անդամներին յորդորում էին այլեւս չբարձրացնել Արեւմտեան Հայաստանի ինքնավարութեան հարցը, այլ լեզու գտնել ու գործել առանց հայերի...

Ու վրացիները գործում էին, գործում էին թիկունքից, գաղտնի, ջանադրաբար՝ Բաթումը պահելու համար Հայաստանի տարածքները լիաբուռ զոհաբերելու պատրաստ։ Կովկասի թաթարները, անշուշտ, համակարծիք էին։ Ի տարբերութիւն Հայաստանի, եւրոպացի աջակիցների պակաս նոյնպէս չկար. Գերմանիան՝ Վրաստանի, Անգլիան՝ թաթարների կողքին էին։

Կովկասեան թաթար Ախունդ մոլլայ Մուհամմէդ Փիշնամազադէն Տրապիզոնում Օսմանեան պատուիրակութեան նախագահին ուղղուած նամակում գրել է. «Մեր ազգը միայն մէկ ցանկութիւն ունի, այն է՝ միա-

ւորուել մեր մեծ եղբայր Օսմանեան բարձր պետութեան հետ եւ հնարաւորինս շուտ Անդրկովկասում հիւրընկալել օսմանեան բանակը» (նոյն տեղում, էջ 92)։

1918-ի ապրիլի 1-ին թուրքական պատուիրակութեան նախագահ Հիւսէյն Ռաուֆ բէյը Հայկական հարցի մասին մէկժամանոց առանձնազրոյց է ունեցել Ալեքսանդր Խատիսեանի հետ, որը նա ամփոփել է կարճ ու յստակ. «հաշտութեան փոխարէն Տրապիզոնէն մենք կը տանէինք մեր երկրին պատերազմ» (անդ, էջ 103)։

Շատ ժամանակ չպահանջուեց վերջնականապէս համոզուելու համար, որ Անդրկովկասեան կառավարութիւնը մեռելածին էր, հանգամանքների բերումով՝ ակամայ ստեղծուած, եւ հանգամանքների ազդեցութեամբ էլ՝ ոչ եւս դարձած, քանզի անհնար էր համատեղել անհամատեղելին։ Մայիսի 11-ին Բաթումում մեկնարկած Թուրքիայի հետ բանակցութիւնների սկզբում այն ներկայացնում էր Անդրկովկասեան հանրապետութիւնը, 30-ից՝ անկախացած երեք պետութիւն։ Դիւանագիտական բոլոր բանակցութիւնների ընթացքում թուրքերն անդադար առաջ էին քաշում նոր պահանջներ, սպառնալիքների միջոցով նոր զիջումներ էին ձգտում կորզել։ Անյագուրդ ախորժակի պայմաններում նրանք անկախ, ինքնիշխան էին թողնում Երեւանը շրջակայքով։ Ընդ սմին, Թուրքիան պահանջում էր նաեւ էջմիածինը եւ բանակցողները թախանձում էին, որ գէթ ամենայն հայոց սրբավայրը մնայ մեր տիրոյթում... (Անդ, էջ 178)։ Յովհաննէս Քաջազնունու հետ հերթական հանդիպումից յետոյ Հալիլ բէյը նկատել է. «Իհարկէ, մեր պահանջները սարսափելի են... Հայերը պարտուել են ու պէտք է հնազանդուեն» (Անդ, էջ 156։ 165)։ Վեհիբ փաշան էլ զգուշացնում էր՝ եթէ հայերը մերժեն յանձնել Ալեքսանդրապոլ-Ջուլֆայ երկաթուղին, իրենք դա կանեն զէնքի ուժով (այսօրուայ հետ զուգահեռները որքան առարկայական են.- Ա. Խ.) (նոյն տեղում)։

Լէօն ցաւով պիտի արձանագրէր. «տասը հազար քառակուսի վերստ էր Հայաստանը, մեծ մասամբ լեռ ու անապատ՝ Սեւանայ լճի չորս կողմը հայ ժողովրդի ոչ թէ բնակութեան տեղ, այլ գերեզման... Էնուէր փաշան գտել էր, որ միայն այսպիսի չափ ունեցող Հայաստանը կարող է երկիւղ չներշնչել Թուրքիային։ Իսկութիւնն այն էր, որ թուրքաց Հայաստանը ոչնչացնելուց յետոյ երիտասարդ թուրքերը ոչնչացնում էին նաեւ ռուսաց Հայաստանը» (Անդ, էջ 202)։

Չնայած բարդագոյն իրավիճակին, մեր գործիչները, պետականութեան հիմքերը կերտող անհատները լաւատես էին ապագայի հանդէպ. «Հզօր է Հայոց հողի ոգին։ Մենք կբերենք վատ հաշտութեան դաշնագիր, սակայն, կբերենք նաեւ անկախ Հայաստան՝ տուն, բոյն, որտեղ կթրծուի ժողովրդի միտքը։ Այդ ամենը կկապի, կմիաւորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարեւոր է։ Ես հաւատում եմ մեր Պետութեանը»-, հեռախօսագրոյցներից մէկն այս խօսքերով է եզրափակել Ալեքսանդր Խատիսեանը (Անդ, էջ 208)։ Անշուշտ գալու էր այդ՝ հայի ստեղծագործ մտքի վերելքի շուրջ եօթ տասնամեակը։ Բայց մինչ այդ ապրել էր պէտք...

Բաթումի բանակցութիւնների ընթացքում թուրքական կողմը հետեւողական՝ անզիջում էր, Վեհիբը «անկեղծօրէն» խոստովանում էր, թէ իրենք դուրս են մղւում Բուլղարիայից, Աֆրիկայից՝ «Բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք. հոն է մեր արիւնը, մեր կրօնը, մեր լեզուն» (Անդ, էջ 213)։ Թուրքերին կանչում-ձգում էին եղբայրները՝ Բաքուից, Դաղստանից, Թուրքէստանից։ Իսկ հայերը կանգնած էին ու կանգնած են այդ ճանապարհին։ «պահանջելով Վանը՝ դուք կփակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան։ Պահանջելով Նախիջեւանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կդառնաք մեզ իջնելու Կուրի հովիտը եւ երթալու Պաքու։ Կարսն ու Ախալքալաքը կփակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ» (Նոյն տեղում)։ Թուրքին մեծ, լայն երկու ճանապարհ էր պէտք զինուած ուժերի ազատ տեղաշարժի համար՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախ եւ Շարուր-Նախիջեւան-Զանգեզուրով դէպի Կուրի հովիտ. «դուք կարող էք մնալ անոնց մէջտեղը, այսինքն՝ Նոր-Պայազէտի եւ Էջմիածնի շուրջը»,- քարտէզն էր գծում Վեհիբը (Նշ. Աշխ., էջ 213)։

Յունիսին, Դիլիջանում, Անդրանիկ Օզանեանը ծանօթանում է հայ-թուրքական հաշտութեան դաշնագրի նախօրինակի բովանդակութեանը եւ յստակ արտայայտում է իր դիրքորոշումը։ Նա համոզուած էր, որ Բաթումում հայերի դէմ հերթական դաւն է նիւթւում. «հայը երբեք չպէտք է հաւատ ընծայի թուրքին, ոչ մի պարագայում չպէտք է գլուխ խոնարհի նրա առջեւ։ ...Հայաստանի ստեղծումով Թուրքիան ուզում է մոռացութեան տալ Արեւմտեան Հայաստանի խնդիրը» (անդ, էջ 217)։

Էնուէրը յաճախ էր կրկնում, թէ քանի հայերը կան, միշտ պէտք է լինեն մեր թշնամիները, ու հանգիստ չտան։ Ուրեմն մէկ միջոց էր մնում՝ պարզապէս բնաջնջել բոլորին եւ հանգիստ խղճով հարցը փակուած համարել։ Թալեաթն աւելի իրատես էր՝ երկու միլիոնի չափ դեռ ողջ մնացած

հայ կայ, դժուար, գրեթէ անհնար գործ է իսպառ բնաջնջելը. «...Աւելի լաւ է, որ անոնց գոհացում տրուի, որովհետեւ եթէ նոյնիսկ 100 000 հայ մնայ աշխարհի երեսին, մեզ հանգիստ չպիտի տան երբեք։ ...Փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ մենք լուծած կ'ըլլանք հայկական հարցը...» (անդ, էջ 227)։

Յունիսի 4-ին Բաթումում կնքուած հայ-թուրքական «Հաշտութեան եւ բարեկամութեան դաշնագիրը» միջազգային առաջին փաստաթուղթն էր, որ կնքել են անկախ Հայաստանի պատուիրակները։ Դաշնագիրն ու դրան կից Յաւելուածը նուաստացնող պահանջներ էին դնում նորանկախ երկրի ղեկավարների առջեւ։ Դրանցից ամենաաղաղակողն, անշուշտ, Անդրանիկին երկրից վտարելու մարմաջն էր... Այս դաշնագիրը եւս մեռելածին էր։ Աշխարհամարտը աւարտուեց Թուրքիայի եւ դաշնակիցների ջախջախիչ պարտութեամբ, եւ մեզ համար քիչ թէ շատ նպաստաւոր պայմաններ ստեղծուեցին։ Սակայն, հէնց դաշնագրից յետոյ էր, որ ՀՀ օրէնսդիր մարմինը Թիֆլիսից տեղափոխուեց համայն հայոց ոստան՝ Երեւան։ Քայլ առ քայլ սկսեցին ստեղծել կառավարման համակարգ, այդ թւում նաեւ արտաքին գործոց նախարարութիւն։ Հէնց այդ պահից էլ ստեղծուեցին արտասահմանեան մշտական դիւանագիտական ներկայացուցչութիւնները (առնուազն 36) (Անդ, էջ 269), որոնք պէտք է ոչ միայն երիտասարդ, վտիտ, անուժ երկրի հոգսերը ներկայացնէին, այլ նաեւ պատասխանատու լինէին աշխարհասփիւռ հայութեան կեանքի անվտանգութեան համար։ Յաւօք, դրանք չկարողացան բաւարար կերպով կատարել իրենց առաքելութիւնը։ Հեղինակը հանգամանօրէն վերլուծել է պատճառները։

1918-ի օգոստոսին Հայաստանի Խորհրդի (1919-ից վերանուանուեց Պառլամենտ) նիստում Յովհաննէս Քաջազնունին ներկայացրեց արտաքին քաղաքականութիւնը կառուցելու իր տեսլականը, որտեղ ոչ մի կերպ չէին դիտարկւում Ռուսաստանի հետ կառուցուելիք յարաբերութիւնները։ Սա զարմացրեց այլ խմբակցութիւնների ներկայացուցիչներին։ Պրոֆեսոր Պետրոսեանի դիտարկմամբ, Քաջազնունին շրջահայեաց ու խորաթափանց պետական գործիչ էր եւ ծրագիրը մշակելիս լաւագոյնս հաշուի էր առել տարածաշրջանում առաջին Աշխարհամարտից յետոյ ուժերի վերադասաւորումները(Անդ, էջ 300)։

Մանրակրկիտ քննւում են Կոստանդնուպոլսում, Բեռլինում, Վիեննայում բանակցային գործընթացները, շահերի բախումներն ու հետաքրք-

րութիւնների շրջանակները, որոնք առանց բացառութեան՝ միշտ, մեր դէմ էին գործում։

Լիակատար շրջափակման մէջ գտնուող երկրի կենսապահովման միակ ճանապարհը Վրաստանով էր, որը սակայն պիտի խաթարուեր 1918 թ. դեկտեմբերին հայ-վրացական պատերազմի պատճառով։ Մենագրութեան հեղինակը դիտարկել է նաեւ Վրաստանի եւ Ադրբեջանի հետ յարաբերութիւնները, որոնք միշտ կառուցուել են ի վնաս Հայաստանի։

Բնականաբար, առանձին անդրադարձել է Ռուսաստանի եւ Ուկրաինայի հետ յարաբերութիւններին։ Ընդ սմին, ՀՀ կառավարութիւնը փորձում էր յարաբերուել եւ Ռուսաստանի հարաւում հաստատուած ցարական բանակի հրամանատարների՝ Դենիկինի ու Կոլչակի, եւ բոլշեւիկների հետ, մէկ-միակ նպատակով՝ դժուարին կացութեան մէջ յայտնուած երկրի համար լուծումներ գտնել։ Շեշտւում է նաեւ, սովի ու համաճարակի ճիրաններում յայտնուած Հայաստանի համար լուծումներ, ուղիներ գտնելու անհրաժեշտութիւնը։ Այս բաժինն ամփոփելով հեղինակը գրում է, թէ այնուամենայնիւ, ՀՀ կառավարութեան ջանքերը՝ Խորհրդային Ռուսաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու ուղղութեամբ, մեծ արդիւնք չեն տուել (Նշ. աշխ., էջ 411)։

Մեծ է գայթակղութիւնը՝ ուսումնասիրութիւնից անդադար յղումներ ներկայացնելու, բայց շարունակութիւնը թողնենք ընթերցողին։ Իսկ կարդալ պէտք է՝ ընթերցող հասարակութիւնը պէտք է կատարելապէս իրազեկ լինի ու դասեր քաղի անցեալից (ի դէպ, ոչ միայն մենք՝ հայերս)։ Այս հանգամանքն ստիպում է, որ հետաքրքրութեամբ սպասենք երկրորդ պրակի լոյս ընծայմանը։

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ